

«ՄՊԱՅԿԱ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՈՒՍԱԲԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022թ.



ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3-5
Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԳԳՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

<Սպայկա> ՍՊԸ
Միակ Սասնակցին

Վերապահումով Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել <Սպայկա> Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության և նրա դուստր Ընկերությունների (այսուհետ՝ <Խումբ>) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը, սեփական կապիտալում փոփոխությունները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ դեռևս շարունակվում է հարկային դատական գործընթացն ընդդեմ Սպայկա ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն և մասնակից Դավիթ Ղազարյանի, նախորդ տարիների ընթացքում այլ իրավաբանական անձի միջոցով անուղղակի հարկերից խուսափելու ենթադրությամբ: Պետեկամուտների կոմիտեն կարծում է, որ տվյալ կազմակերպությունը փաստացի գտնվել է Սպայկա ՍՊԸ-ի ղեկավարության վերահսկողության ներքո և, ենթադրաբար, գործել է՝ ելնելով Սպայկա ՍՊԸ-ի շահերից: Հարկային գործի մանրամասները նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 26-ում:

Ինչպես նշվում է Ծանոթագրություն 26-ում, թեև Խումբը Դավիթ Ղազարյանին կալանքից ազատելու համար 1 միլիարդ ՀՀ դրամ է վճարել Պետեկամուտների կոմիտեի միասնական հաշվեհամարին, 2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում Խումբը չի ճանաչել որևէ պահուստ տվյալ գործի առնչությամբ հնարավոր պարտավորությունների գծով: Մենք չենք կարողացել ձեռք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ հնարավոր պարտավորությունների վերաբերյալ, որոնք կարող էին առաջանալ Խմբի համար 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նշված գործի հետևանքով, քանի որ հետաքննությունը դեռևս ընթացքի մեջ է: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել, թե արդյոք անհրաժեշտ են ճշգրտումներ՝ հարկային գործից բխող և Խմբին վերագրվելիք հնարավոր պարտավորությունների գծով պահուստի ստեղծման առնչությամբ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի գլխավոր հաշվապահը ֆինանսական հաշվետվության վավերացման ամսաթվի դրությամբ չունի փորձագետ հաշվապահի կամ աուդիտորի որակավորում:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝


- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հնկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հնկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հնկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

14 Օգոստոսի 2023թ.

Ռուզաննա Արզումանյան

Գլխավոր տնօրեն



Էմիլ Նիկողոսյան

Խմբի ղեկավար-աուդիտոր



Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2022թ.

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	31 դեկտեմբեր 2022	31 դեկտեմբեր 2021
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	112,383,431	115,990,967
Ոչ նյութական ակտիվներ	5	64,174	76,424
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7	2,812,191	2,869,380
		<u>115,259,796</u>	<u>118,936,771</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	6,109,007	5,667,593
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	19,684,003	16,475,932
Դրամական միջոցներ	10	774,414	39,606
		<u>26,567,424</u>	<u>22,183,131</u>
Ընդամենը ակտիվներ		<u>141,827,220</u>	<u>141,119,902</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	11	6,294,169	6,294,169
ՀՄ վերագնահատումից արժեքի ան		55,200	55,200
Զվերահսկվող բաժնեմաս		3,030,050	3,030,050
Կուտակված շահույթ		2,481,183	6,408,571
		<u>11,860,602</u>	<u>15,787,990</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	70,708,406	84,220,926
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	5,206,868	5,514,847
Հետաձգված հարկային պարտավորություններ	6	3,652,827	3,150,368
		<u>79,568,101</u>	<u>92,886,141</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	10,419,891	12,755,644
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	38,417,288	19,690,127
Շահութահարկի գծով պարտավորություն		1,561,338	-
		<u>50,398,517</u>	<u>32,445,771</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>141,827,220</u>	<u>141,119,902</u>

Դավիթ Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Վավերացման ամսաթիվ 14/08/2023թ.

Խորեն Մանուկյան
Գլխավոր հաշվապահ


Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	15	40,233,417	36,959,559
Վաճառքի ինքնարժեք	16	(13,687,750)	(11,294,492)
<i>Համախառն շահույթ (վնաս)</i>		<u>26,545,667</u>	<u>25,665,067</u>
Այլ եկամուտ	17	636,353	529,397
Իրացման ծախսեր	18	(14,335,715)	(9,826,746)
Վարչական ծախսեր	19	(3,628,289)	(1,238,897)
Գյուղատնտեսական գործ.		(16,932,663)	(13,704,909)
ժամանակ.ծախսեր	20.1		
Այլ ծախսեր	20.2	(3,484,729)	(721,918)
<i>Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)</i>		<u>(11,199,376)</u>	<u>701,994</u>
Ֆինանսական հոդվածներ	21	(4,796,790)	(6,539,376)
Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս	22	14,940,164	10,189,636
<i>Շահույթը (վնասը) մինչև հարկերը</i>		<u>(1,056,002)</u>	<u>4,352,254</u>
Շահութահարկի գծով (ծախս)	23	(2,871,387)	(3,150,416)
փոխհատուցում			
<i>Տարվա զուտ արդյունք</i>		<u>(3,927,389)</u>	<u>1,201,838</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>		<u>(3,927,389)</u>	<u>1,201,838</u>

Դավիթ Ղազարյան
Գլխավոր տնօրեն



Խորեն Ասատրյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Կանոնադրական կապիտալ	Զվերահսկվող բաժնեմաս	Կուտակված շահույթ/ (վնաս)	Վերագնահատման պահուստ	Ընդամենը սեփական կապիտալ
2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	6,294,169	3,030,050	55,200	14,504,675
Ճշգրտում	-	-	-	81,477
Շահաբաժիններ	-	-	-	-
Տարվա շահույթ	-	-	-	1,201,838
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	1,201,838
2021 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,294,169	3,030,050	55,200	15,787,990
Ճշգրտում	-	-	-	1
Շահաբաժիններ	-	-	-	(3,927,389)
Տարվա շահույթ	-	-	-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	(3,927,389)
2022 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,294,169	3,030,050	55,200	11,860,602




Խոսրոս Ասատրյան
Գլխավոր հաշվապահ

Դավիթ Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	32,020,155	33,873,177
Գործառնական այլ գործունեությունից	32,001,421	21,008,938
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	64,021,576	54,882,115
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Գնումների գծով	(29,421,909)	(23,537,492)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անումից	(6,771,391)	(5,562,902)
Վճարումներ բյուջե և սոց. վճարումների գծով	(5,247,000)	(1,898,098)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(11,725,518)	(6,320,483)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	(53,165,818)	(37,318,975)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	10,855,758	17,563,140
Ներդրումային գործունեությունից մուտքեր		
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	621,490	12,388
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	254,194	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	875,684	12,388
Ներդրումային գործունեությունից ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	(1,871,872)	(3,807,950)
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից	(2,765,121)	(5,322,199)
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	(4,636,993)	(9,130,149)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(3,761,309)	(9,117,761)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	32,331,195	57,489,899
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	32,331,195	57,489,899
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	(35,843,584)	(62,759,602)
Վճարված տոկոսներ և շահաբաժիններ	(2,309,389)	(3,021,875)
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր	(26,865)	(77,912)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	(38,179,838)	(65,859,389)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(5,848,643)	(8,369,490)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	1,245,806	75,889
Արտադրության փոխարժեքային տարբերություններ	(510,998)	(175,677)
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	39,606	139,394
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	774,414	39,606

Դավիթ Լազարյան

Գլխավոր տնօրեն

Խորեն Ամուրյան

Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բնակացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**ՀԱՄԱԼՍՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

31 դեկտեմբերի 2022թ.-ին ավարտված տարվա համար

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

31 դեկտեմբերի 2022թ. ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Սպայկա» ՍՊԸ-ի (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների՝ «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի, Գրինհաուս ՍՊԸ-ի և Կովկասֆուդ ՍՊԸ-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

«Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 2001թ-ին Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո՝ Դավիթ Ղազարյանի կողմից: Ընկերության գրանցման հասցեն է՝ Արշակունյաց պող. 252, Երևան 0007, ՀՀ:

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- գյուղերի վաճառք/արտահանում
- գյուղերի արտադրություն
- կապույտ պանրի արտադրություն
- միջազգային բեռնափոխադրումներ
- բեռնատար ավտոմեքենաների ավտոտեխսպասարկում
- գյուղերի մշակում
- այգեհիմնման ծառայություն

«Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2010թ-ին՝ Վրաստանի Հանրապետության օրենքների ներքո: Հիմնադիր է համարվում «Սպայկա» ՍՊԸ-ի հիմնադիր Դավիթ Ղազարյանը: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Վրաստան, ք. Թբիլիսի, Սաբուրթալիսի շրջան, գ. Դիգոմի: «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունն է Վրաստանի տարածքում պտուղների մթերման ու Ռուսաստան արտահանման կազմակերպումը:

Գրինհաուս ՍՊԸ-ն նույնպես ձեռք է բերվել «Սպայկա» ՍՊԸ-ի սեփականատիրոջ կողմից 2017թ-ին: Այն հիմնադրվել է 2011թ-ին ՀՀ օրենքների ներքո: Ընկերության գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0043, Ծերեթելի փ., 54: Գրինհաուս ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը կապված է իրեն պատկանող ջերմոցների հետ, որոնք օգտագործվում են թարմ բանջարեղեն արտադրելու համար:

Այնուամենայնիվ, ըստ կողմերի միջև ձեռքբերված համաձայնության, «Սպայկա» ՍՊԸ-ն և՛ «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի և՛ «Գրինհաուս ՍՊԸ»-ի նկատմամբ վերահսկողության բոլոր տարրերը.

- ✓ Իշխանություն - «Սպայկա» ՍՊԸ-ի ղեկավարությունը իրավունք ունի նշանակել, վերանշանակել կամ պաշտոնից ազատել «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի և «Գրինհաուս» ՍՊԸ-ի առանցքային կառավարչական անձնակազմի անդամներին: Նաև «Սպայկա» ՍՊԸ-ի ղեկավարությունն իրավունք ունի ուղղորդելու կնքելու գործարքներ կամ արգելելու դրանցում փոփոխություններ կատարել՝ ի շահ ներդրողի: Ըստ էության «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի և «Գրինհաուս» ՍՊԸ-ի գործունեությունները ամբողջությամբ կախված են «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից կատարվող գործարքներից:
- ✓ Փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածությունը և հատույցների վրա ազդեցության կարողությունը - «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի գործառնությունը «Սպայկա» ՍՊԸ-ի

կողմից գյուղմիջերբերը Հայաստանից Ռուսաստան արտահանման գործընթացի անխափան ապահովումն է Վրաստանի տարածքում: «Գրինհաուս» ՍՊԸ-ի գործառնությունը ջերմոցների ապահովումն է: Փոփոխական հատույցներն արտահայտված են ակտիվների և գործառնությունների շղթայական փոխկապակցմամբ:

Փաստացի «Սպայկա» ՍՊԸ-ն է իրականացնում «Սպայկա-Ջորջիա» ՍՊԸ-ի և «Գրինհաուս» ՍՊԸ-ի ամբողջական կառավարումը, ունի ռիսկերի ամբողջական ենթարկվածություն և համարվում է մայր կազմակերպություն, որի գծով չհսկվող բաժնեմասերը կազմում են 100%:

«Կովկասֆուդ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը ձեռք է բերվել «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից 2017 թ-ին: Այն հիմնադրվել է 2013թ-ին ՀՀ օրենքների ներքո: Ընկերության գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0006, Գարեգին Նժդեհի փ., 56/2: «Կովկասֆուդ» ՍՊԸ-ի հիմնական գործունեությունը կապված է իրեն պատկանող այգիների հետ, որոնք օգտագործվում են թարմ միրգ ստանալու համար, այն համարվում է դուստր ընկերություն 100% վերահսկվող բաժնեմասով:

2022թ. խմբի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1876 մարդ (2021թ.՝ 1789 մարդ):

2. Հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Հաշվապահական հաշվառման վարման անընդհատության սկզբունքը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա, և Խմբի գործունեությունը շարունակական է լինելու տեսանկյունից:

2022 թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը գրանցել է 3,927,389 հազար ՀՀ դրամ գումարով գուտ վնաս (2021թ-ին՝ 1,201,838 հազար դրամ գումարով գուտ շահույթ), և նախորդ տարվա համեմատ Խմբի համախառն շահույթը ավելացել է 880,600 հազար ՀՀ դրամով, իսկ գործառնական շահույթը նվազել է 11,901,369 հազար ՀՀ դրամով՝ կազմելով համապատասխանաբար 26,545,667 հազար և 11,199,376 հազար դրամ: Խմբի ղեկավարությունը կարծում է, որ հաշվետու ֆինանսական արդյունքների վատթարացումը հարուցված է եղել հարկային դատական գործի (նկարագրված է ծանոթագրություն 26-ում) և հիմնական գնորդ երկրի՝ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև առկա ռազմական հակամարտության, որը առաջացրել է Ռուսաստանի Դաշնության հանդեպ կիրառվող մեծաքանակ սահմանափակումներ: Սահմանափակումների ազդեցությունը Ռուսաստանի տնտեսության վրա էական է, որը ուղղակի և անուղակի իր ազդեցությունն է ունենում Խմբի գործունեության, ինչպես նաև դրամական հոսքերի վրա: Ինչպես նաև էական ազդեցություն է ունեցել Վրաստանի և Ռուսաստանի սահմանակետում բեռների երկարաժամկետ պարապուրդը՝ պայմանավորված եղանակային և այլ բազմապիսի խոչընդոտող հանգամանքներով: Պայմանավորված անորոշության բացասական ազդեցությունների հետևանքով Խմբի ֆինանսական գործունեության վրա, ինչը ստիպել է Խմբին 2022 թվականների ընթացքում զգալիորեն նվազեցնել բարձր շահութաբերություն ապահովող առևտրային գործառնությունները և առաջացրել է Խմբի պլանավորած կապիտալ ներդրումների և ֆինանսավորման ծրագրերի լուրջ հետաձգումներ: Խմբի ղեկավարությունն կարծում է, որ Խմբի ֆինանսական ցուցանիշները կշարունակեն վերականգնվել և կայունանալ հարկային դատական գործը հանգուցալուծվելուց և պատերազմական գործողությունների ավարտին:

2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի վարկային պարտավորությունները կազմել են 95,842,097 հազար ՀՀ դրամ: Ինչպես նշվում է ծանոթագրություն 12-ում, 2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունեցել է ժամկետանց վարկային պարտավորություններ 21,755,441 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (2021 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 17,481,752 հազար ՀՀ դրամ): Մինչ օրս Խմբի ժամկետանց վարկային մնացորդները կազմում են շուրջ 38.7 միլիոն ԱՄՆ դոլար և 24.4 միլիոն Եվրո: Ինչպես նաև Խումբն ունի որոշ ապահովված բանկային վարկեր՝ 2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 46,258,120 հազար դրամի հաշվեկշռային արժեքով, որոնց վարկային պայմանագրերով Խմբի համար սահմանված են որոշակի ֆինանսական կովենանտներ, որոնք 2022թ-ի դեկտեմբերի 31-ի: Թեև վերը նշված դեպքերը կարող են ներկայացնել բանկային վարկերի մասով պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) իրադարձություն, ինչի դեպքում վարկերը կարող են ենթակա լինել վճարման ըստ պահանջի, այնուամենայնիվ, մինչ օրս վարկատուներից ոչ մեկը նման պահանջ չի ներկայացրել: Հետևաբար, համապատասխան վարկերը 2022թ-ի դեկտեմբերի 31-ի և 2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն դասակարգվել որպես ըստ պահանջի վճարման ենթակա վարկեր: Խումբը և միջազգային վարկատու կազմակերպությունները ժամկետանց միջազգային վարկերի հետագա սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ջանքեր են կիրառում, և որպես արդյունք, 2021թ-ի փետրվարի 19-ին, Խմբի միջազգային երեք խոշորագույն վարկատու կազմակերպությունների նախաձեռնությամբ, համաշխարհային խոշորագույն խորհրդատվական ընկերությունների «Մեծ Քառյակի» անդամ հանդիսացող

ընկերությանը հանձնարարել են կատարել Ընկերության գործունեության Անկախ բիզնես ուսումնասիրություն (Independent Business Review), որի նպատակներից է բավարար հիմքեր ստեղծել միջազգային վարկատուների համար ժամկետանց վարկային պայմանագրերի պայմանների վերանայման համար: 22 կառավարությունը աջակցում է Խմբին ժամկետանց վարկային պարտավորությունների խնդիրների հանգուցալուծման գործում: 2021թ. դեկտեմբերի 30-ին Ընկերությունը եռակողմ համաձայնագիր կնքեց Վոլվո Թրաք Քորպորեյշնի և Շվեդիայի Արտահանման Վարկային Գործակալության (EKN) հետ, համաձայն որի Ընկերության վարկային պայմանագիրը վերաձևակերպվեց՝ մասնավորապես նվազեցվեց գործող պայմանագրերի տոկոսադրույքները 5.0%-5.5%-ից 1.5%-2%, իսկ պայմանագրի գործողության ժամկետը երկարացվեց մինչև 2027թ. հունվարի 31-ը: Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ վերոնշյալ վարկերի պայմանների ողջամիտ վերանայման արդյունքում, Խումբը ի վիճակի է լինելու սպասարկել տվյալ վարկային պարտավորությունները:

Խմբի ղեկավարությունը ակնկալում է վերաբանակցել առկա վարկերի ու հնարավոր պարտավորությունների վճարման ժամկետները, իսկ պահանջվող լրացուցիչ վճարումները իրականացնել գործառնական դրամական հոսքերից, առևտրային դեբիտորական պարտքերի մարումներից կամ կապիտալի ներգրավման այլընտրանքային ձևերից՝ ինչպիսիք են նոր կամ վերանայված վարկերը/վարկային գծերը, պարտատոմսերի թողարկումը, մասնավոր տեղաբաշխումները կամ ակտիվների վաճառքը:

Ղեկավարությունը ընդունում է, որ առկա է որոշակի անորոշություն Խմբի վճարման ենթակա վարկերի վերաֆինանսավորման կամ մարման կարողության վերաբերյալ: Այնուամենայնիվ, ինչպես վերը նշված է, ղեկավարությունը ողջամտորեն ակնկալում է, որ Խումբն ունի բավարար միջոցներ և հնարավորություններ՝ տեսանելի ապագայում իր գործառնական գործունեությունը շարունակելու համար: Եթե որևէ պատճառով Խումբն ի վիճակի չի լինի պահպանել իր անընդհատ գործելու կարողությունը, ապա դա կարող է ազդել գործարարության բնականոն ընթացքում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքներով ակտիվներ իրացնելու և պարտավորությունները մարելու վրա:

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 9-ում, 2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 4,659,049 (Համարժեքը 833,461 հազար ՌԴ ռուբլի) հազար դրամի դեբիտորական պարտք մեկ գործընկերոջ գծով (2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,350,822): Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ տվյալ դեբիտորական պարտքը վերադարձվելի է և կմարվի մոտակա ապագայում:

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 26-ում, առկա է շարունակական հարկային դատական գործընթաց «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի նկատմամբ՝ հարկերից խուսափելու ենթադրությամբ, ինչը, ըստ Խմբի ղեկավարության, անընդհատ գործելու կարողության առումով էական ազդեցություն չի ունենա Խմբի վրա, հաշվի առնելով Խմբի ռազմավարական նշանակությունը Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի և առհասարակ տնտեսության համար և Խմբի դերը երկրի գյուղատնտեսական արժույթի արտահանման մրցակցային առավելությունը բարելավելու գործում:

2.3 Դանաչման հիմքեր

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով:

2.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում համախմբված

Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և ընկերության գործարքների տնտեսական էությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Գրամով ներկայացված ամբողջ համախմբված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի ընկերության ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում, եթե գնահատումները ազդեցություն ունեն միայն այդ ժամանակաշրջանի վրա: Եթե ազդեցությունը վերաբերում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններին, ապա վերանայումները ճանաչվում են ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա ժամանակաշրջաններում:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և փոփոխություններ ՖՀՄՍ-ներում առ 31/12/2022թ.

ՀՀՄՍ1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Պարտավորությունների դասակարգումը

ՀՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, ըստ որի՝ եթե կազմակերպությունը իրավունք ունի երկարաձգել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է որպես ոչ ընթացիկ անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

Կատարվել է նաև հետագա պարզաբանում այն մասին, որ եթե պարտավորության մարման ժամկետը կախված է կազմակերպության կողմից որևէ կովենանտների բավարարելու փաստից, ապա պարտավորության դասակարգման նպատակով հաշվի են առնվում միայն այն կովենանտները, որոնց կազմակերպությունը պետք է բավարարեր հաշվետու ամսաթվի դրությամբ: Անհրաժեշտ է նաև կատարել կովենանտների վերաբերյալ ռիսկերի գծով բացահայտումներ:

ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ12 «Շահութահարկեր». Մեկ գործարքով առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկեր

ՀՀՄՍ 12-ում պարզաբանվել է, որ հետաձգված հարկեր առաջանալու բացառությունը չի վերաբերվում այն իրավիճակներին, երբ գործարքն առաջացնում է ակտիվ, և պարտավորություն, որոնք էլ համապատասխանաբար առաջացնում են և նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերություններ, և այդ պահին ազդեցությունը զուտ ակտիվների փոփոխության վրա 0 է:

Այս գործարքից առաջացող հետաձգված հարկային պարտավորությունը չպետք է գերազանցի հետաձգված հարկային ակտիվին:

ՀՀՄՍ 12-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2023թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ». Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը

ՀՀՄՍ 8-ում հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունների սահմանումը փոխարինվել է հաշվապահական հաշվառման գնահատման սահմանմամբ: Ըստ նոր սահմանման հաշվապահական հաշվառման գնահատումը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող դրամային ցուցանիշներն են, որոնց գծով առկա են չափման անորոշություններ:

ՀՀՄՍ 8-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2023թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն». Վարձակալության պարտավորություն, որն առաջանում է հետադարձ վարձակալությամբ վաճառքից

ՖՀՄՍ 16-ում կատարված խմբագրումը պահանջում է, որ վաճառող-վարձակալը վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքում պարտավորությունը հաշվառի այնպես, որ չճանաչվի որևէ օգուտ կամ վնաս վաճառող-վարձակալի կողմից պահվող օգտագործման իրավունքի գծով

Այնուամենայնիվ, վաճառող-վարձակալը կարող է շահույթում կամ վնասում ճանաչել վարձակալության մասնակի կամ ամբողջական դադարեցման գծով օգուտը կամ վնասը:

ՖՀՄՍ 16-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

2.7 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար և Խմբի ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Խմբի բոլոր ընկերությունների կողմից:

Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Ընկերության կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.6-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններն այն կազմակերպություններն են, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբը կարող է դեկլարել կազմակերպության գործունեության ֆինանսական և գործառնական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտ ստանալու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերված կամ օտարված դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններն ընդգրկված են Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ սկսած վերահսկողության սահմանման ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը: Ներխմբային հաշվեկշիռները և ներխմբային գործարքներից չիրացված եկամուտներն, ու ծախսերը դուրս են հանվում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ:

Անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ են արվում դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում՝ դրանց քաղաքականությունները Խմբի այլ անդամների կողմից կիրառվող քաղաքականությանը համապատասխանեցնելու համար:

3.3 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍ 1. *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* ստանդարտի համաձայն: Ընկերությունը որոշել է ներկայացնել համապարփակ համախմբված ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն:

Կազմակերպությունը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգմամբ: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ծախսերը դասակարգվում են ըստ գործառույթի: Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը ներկայացվում է ուղղակի մեթոդով, իսկ տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգվում են որպես ներդրմային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

3.4 Արտարժույթ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 393.57 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 480.14 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 542.61 ՀՀ դրամ, 2021թ. հունվարի 01-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 522.59 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 641.11 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Ընկերության դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են տեղադրվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ միասին:

Ճանաչման նշված սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը գնահատում է իր հիմնական միջոցների գծով բոլոր ծախսումները դրանց կատարման պահին: Այս ծախսումները ներառում են հիմնական միջոցի միավորի կառուցման կամ ձեռքբերման սկզբնավորման ծախսումները և հետագայում կատարված ծախսումները՝ կապված դրա ավելացման, մի մասի փոխարինման կամ սպասարկման հետ:

Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով ուղիղ գծային մեթոդը, եթե մաշվածության հաշվարկման այլ մեթոդը չի ապահովում հիմնական միջոցի տնտեսական օգուտների նվազեցման ավելի արժանահավաստ պատկերը:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների օգտակար ծառայության փաստացի ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն փոխվել:

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	50 տարի
Սարքավորումներ	5-20 տարի
Այլ փոխադրամիջոցներ	10 տարի
Արտադրական և տնտեսական գույք	5 տարի

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ներառում են հաշվապահական հաշվառման ծրագիր, արտոնագրեր և այլն:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.7 Ներդրումային գույք

3.7.1. Սահմանում

Ներդրումային գույքը գույք է (հող կամ շենք, կամ շենքի մի մաս, կամ և՛ հող, և՛ շենք), որը պահվում է Ընկերության կողմից վարձակալությունից, եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ թե՝

- ա) արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, կամ
- բ) սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

3.7.2. Չափում

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով):

Գործառնության հետ կապված ծախսումները ներառվում են սկզբնական չափման մեջ: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

3.7.3. Մաշվածություն

Ներդրումային գույքի միավորի մաշեցնող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ներդրումային գույքի օգտակար ծառայությունը արտահայտված է ժամկետով:

3.7.4. Վերադասակարգումներ

Գույքը որպես ներդրումային վերադասակարգելը կամ հակառակը տեղի է ունենում այն և միայն այն դեպքում, երբ փոփոխվել է դրանց օգտագործումը, որի վկայություններն են՝

ա) Ընկերության կողմից գույքի զբաղեցումը սկսելը. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես հիմնական միջոց,

բ) Ընկերության կողմից գույքի զբաղեցումն ավարտելը. այս դեպքում Ընկերության կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք:

3.8 Վարձակալություն

ա/ Գործառնական վարձակալություն - վարձակալությունը համարվում է գործառնական այն դեպքերում, երբ չի նախատեսվում սեփականության իրավունքից ծագող էական ռիսկերի և հատույցների փոխանցում վարձակալին: Գործառնական վարձակալության վարձավճարների ընդհանուր գումարը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում գծային մեթոդով: Այն դեպքերում, երբ վարձակալված ակտիվն օգտագործվում է արտադրական նպատակներով վարձավճարները ճանաչվում են արտադրանքի ինքնարժեքում:

բ/ Ֆինանսական վարձակալություն – վարձակալությունը համարվում է ֆինանսական այն դեպքերում, երբ սեփականության իրավունքից ծագող ըստ էության բոլոր էական ռիսկերը և հատույցները փոխանցվում են վարձակալին:

Այն դեպքերում երբ կազմակերպությունը հանդիսանում է ֆինանսական վարձակալության վարձակալ, վարձակալված գույքը ակտիվ է ճանաչվում վարձակալության սկզբի դրությամբ իրական արժեքով, կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով եթե վերջինս ավելի փոքր է: Ակտիվի մաշվածությունը հաշվեկշռվում է հիմնական միջոցների մաշվածության համար նախատեսված մոտեցումներով: Նույն չափով ճանաչվում է նաև համապատասխան պարտավորությունը: Պարտավորության սկզբնական արժեքի և վճարման ենթակա համախառն գումարի տարբերությունը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է որպես տոկոսային ծախսում այնպիսի տոկոսադրույքով, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ժամանակաշրջանի սկզբի դրությամբ պարտավորության հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Այն դեպքերում երբ կազմակերպությունը հանդիսանում է ֆինանսական վարձակալության վարձատու, վարձակալված գույքը ապաճանաչվում է, և ճանաչվում է դեբիտորական պարտք վարձակալությունում գուտ ներդրումների չափով: Ֆինանսական վարձակալության հանձնած գույքի հաշվեկշռային արժեքի և վարձակալությունում գուտ ներդրման տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս վարձակալության սկզբին:

Դեբիտորական պարտքի սկզբնական արժեքի և ստացման ենթակա համախառն գումարի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ այնպիսի տոկոսադրույքով, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Վարձակալության ժամկետ է համարվում այն ժամանակահատվածը, որի համար կնքվել է վարձակալության պայմանագիրը և որի համար այն չի կարող չեղյալ համարվել, գումարած այն ժամանակահատվածը, որով վարձակալը կարող է երկարաձգել ակտիվի վարձակալումը լրացուցիչ վճարի դիմաց կամ առանց այդպիսի վճարի այն դեպքում, երբ վարձակալման ժամկետի սկզբում առկա է բավականաչափ համոզմունք առ այն, որ վարձակալը մտադիր է օգտվել այդ իրավունքից:

3.9

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է օգտագործելով FIFO (ԱՄԱԵ) մեթոդը: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հոդրությունը:

3.10

Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները՝ շահույթում կամ վնասում ճանաչված փոփոխությունների հետ մեկտեղ, բացառությամբ նախքան բերքահավաքը, աճեցման/կենսաբանական փոխակերպման փուլում գտնվող գյուղատնտեսական արտադրանքի:

Նախքան բերքահավաքը և աճեցման/կենսաբանական փոխակերպման փուլում գտնվող գյուղատնտեսական արտադրանքը ճանաչվում է ինքնարժեքով, այնուհետև իրական արժեքով՝ հանած բերքահավաքի պահին վաճառքի ծախսերը՝ շահույթում կամ վնասում ճանաչված փոփոխությունների հետ մեկտեղ:

3.11

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան

համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, ինչպես նաև առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

Ֆինանսական պարտավորություններ

(հազ. դրամ)

	2022թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
Ստացված փոխառություններ	726,931	1,134,473
Բանկային վարկեր	79,421,087	95,382,118
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	980,279	459,978
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,306,928	4,964,841
Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ	87,435,225	101,941,410

I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են անվանական արժեքով:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Ղեկիտորական պարտքերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Ընկերությունը վերանայում է իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ դրանց վերականգնելիության ապացույցներ հայտնաբերելու համար: Այդպիսի ապացույցը ներառում է հաճախորդի վճարումների հաշվառումը և հաճախորդի ընդհանուր ֆինանսական դիրքը: Եթե առկա են պարտքի չվերականգնման հայտանիշեր, ապա հաշվարկվում է փոխհատուցվող գումարը և ձևավորվում է պահուստ՝ համապատասխան անհուսալի և կասկածելի պարտքերի համար:

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստը գնահատում է ամբողջ ժամանակահատվածի համար:

Պահուստի գումարը արտացոլվում է շահույթում կամ վնասում: Պարտքային ռիսկի ուսումնասիրությունը շարունակական գործընթաց է, և պահուստի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունն ու ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և համապատասխանաբար ճշգրտվում:

II Մնացորդները դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «փոխառություններ և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

I Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են անվանական արժեքով՝ ներառյալ գործարքային ծախսերի: Փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

II Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.12 Արժեզրկում

Հիմնական միջոցների

Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ՝ համապարփակ ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեքկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեքկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեքկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեքկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեքկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեքկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեքկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեքկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեքկում ճանաչված չլիներ:

3.13 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.14 Շահութահարկ

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

3.15 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սխտեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են: Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.16 Հասույթի ճանաչում

Հասույթը սովորական գործունեության ընթացքում տրամադրված ապրանքի և ծառայությունների համար ստացվելիք գումարն է և չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հանած գեղչերը, վաճառքի հետ կապված փոխհատուցվող հարկերը, ինչպես նաև երրորդ կողմի անունից հավաքագրված գումարները: Եթե հասույթի ճանաչման և վճարման միջև ընկած ժամանակաշրջանը չի գերազանցում 12 ամիսը, ապա ստացվելի (ստացված) գումարների գծով ներկա արժեքի (ապագա արժեքի) հաշվարկ չի կատարվում:

Այն դեպքում, երբ պայմանագիրն իր մեջ ներառում է տարբեր բաղադրիչները, առանձնացվող բաղադրիչները դիտարկվում են որպես առանձին կատարման պարտականություններ և հասույթը ճանաչվում է յուրաքանչյուր կատարման պարտականության գծով առանձին: Այսպիսի դեպքերում պայմանագրի գծով ընդհանուր հասույթի գումարը բաշխվում է առանձին կատարման պարտականությունների միջև դրանց առանձին վերցված իրական արժեքների (որը սովորաբար առանձին վաճառքի գինն է) համամասնությամբ:

Խմբի կողմից ստացված հասույթի ճանաչումը կատարվում է հետևյալ հիմունքով.

Ապրանքի վաճառք

Ապրանքի վաճառքից հասույթը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Խումբը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դերիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցման հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանում ըստ կատարման առաջընթացի՝ յուրաքանչյուր կատարման պարտականության գծով, ինչը գնահատվում է որպես փաստացի մատուցված ծառայության և մատուցվող ամբողջ ծառայության հարաբերակցություն:

Տրանսպորտային, ինչպես նաև ավտոմեքենաների սպասարկման գծով ծառայություններից հասույթը ճանաչվում է կատարման պարտականությունն ավարտելուց:

1. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍԵՓՄԵՆՏՆԵՐ

Խմբի գործունեությունը հիմնականում բաժանվում է վեց ճյուղի, որոնք Խմբի հաշվետու սեգմենտներն են: Ստորև ներկայացված է հաշվետու սեգմենտների ամփոփ նկարագիրը:

1) Գյուղմթերքի վաճառք /արտահանում

Խումբը Հայաստանում և Վրաստանում իրականացնում է տարատեսակ թարմ մրգերի և բանջարեղենի սեզոնային մթերումներ, ինչպես նաև արտադրում է գյուղատնտեսական մթերք՝ միրգ և բանջարեղեն: Այդ միրգն ու բանջարեղենը պահվում է Խմբի սառնարանային պահեստներում և հիմնականում արտահանվում է: Խումբն ունի մատակարարման պայմանագրեր Ռուսաստանի խոշորագույն մանրածախ առևտրի ցանցերի հետ:

Գյուղմթերքը հիմնականում արտահանվում է «Արարատ Փրոյե» և «Արարատ Ֆուդ» ապրանքանիշերի ներքո:

2) Միջազգային բեռնափոխադրումներ

Խումբը մատուցում է երրորդ կողմի միջազգային բեռնափոխադրման ծառայություններ՝ հիմնականում Հայաստան ներկրողների համար: Խումբը միջազգային բեռնափոխադրումները իրականացնում է հիմնականում իրեն պատկանող բեռնատարներով, սակայն, անհրաժեշտության դեպքում, ներգրավում է նաև վարձակալած բեռնատարներ: Խումբն ունի ավելի քան 300 Վոլվո և Կոռն/Շմիտց մակնիշի բեռնատարներ:

Միջազգային բեռնափոխադրման սեգմենտը մեծապես օժանդակում է գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի/արտահանման հիմնական սեգմենտի գործունեությանը: Բացի այդ, այն ապահովում է գործունեության արդյունավետություն՝ ստեղծելով հավելյալ արտաքին եկամուտներ:

3) Գյուղմթերքի արտադրություն

Վերջին տարիների ընթացքում Խումբը շարունակաբար զարգացնում է գյուղմթերքի սեփական արտադրության սեգմենտը (թարմ միրգ ու բանջարեղեն), որում հիմնականում ընդգրկված են ջերմոցային տնտեսությունների շահագործումը, բանջարեղենի ու մրգի բաց դաշտի մշակությունը և պտղատու ծառերի աճեցումը: Արտադրված միրգն ու բանջարեղենը արտահանվում է Խմբի կողմից, որպես գյուղմթերքի վաճառք/արտահանում իր հիմնական սեգմենտի մի մաս:

2019թ-ի ընթացքում Խումբը ավարտին է հասցրել մոտ 50 հեկտար ջերմոցային տարածքների շինարարությունը և սկսել դրանց շահագործումը՝ այսպիսով մեծացնելով Խմբի կողմից շահագործվող ջերմոցային տնտեսության ընդհանուր տարածքը մինչև ավելի քան 105 հեկտար:

2018 – 2020թթ-ի ընթացքում Խումբը ավարտին է հասցրել մոտ 280 հեկտար պտղատու այգիների մշակումը և ծառերի տունկը՝ այսպիսով մեծացնելով պտղատու այգիների ընդհանուր տարածքը (հիմնականում ծիրանենի, կեռասենի, խնձորենի, սալորենի և տանձենի): Բացի այդ, 2021թթ-ի ընթացքում Խումբը սկսել է մոտ 195 հեկտար ինտենսիվ այգետարածքների կառուցում: Ակնկալվում է, որ 2022-2023 թվականներին 475 հեկտարի մրգատու ծառերը կհասունանան բերքահավաքի համար:

4) Բեռնատար մեքենաների ավտոտեխսպասարկում

Ընկերությունը կառուցել է Ավտոտեխսպասարկման կենտրոն բեռնատարների համար, որը Հայաստանում «Վոլվո» բեռնատար մեքենաների պաշտոնական ներկայացուցիչն է: Ավտոտեխսպասարկման կենտրոնը հանձնվել է շահագործման 2016թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում: Կենտրոնը սպասարկում է Ընկերությանը պատկանող բեռնատարները, ինչպես նաև ծառայություններ մատուցում երրորդ կողմերին:

5) Կապույտ պանրի արտադրություն

2017թ-ին Խումբը սկսել է կապույտ պանրի գործարանի շինարարություն: Այդ նպատակով նա պետական շնորհի միջոցով ստացել է հողատարածք և ստորագրել վարկային պայմանագիր վարկային կազմակերպության հետ՝ կապույտ պանրի արտադրության համար սարքավորման – արտադրական գծի ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով: 2019 թ-ին կապույտ պանրի գործարանը հանձնվել է շահագործման, և Խումբը սկսել է արտադրել և վաճառել կապույտ պանիր, «Սամբիել» անվան ներքո, հիմնականում արտահանման նպատակով:

Մյուս սեզմենտները հիմնականում ներկայացնում են պլաստիկ տուփերի, պահածոյացված գյուղմթերքի և բետոնե սյուների արտադրություն:

Ստորև ներկայացված է յուրաքանչյուր հաշվետու սեզմենտին վերաբերող տեղեկատվությունը: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է գործառնական սեզմենտների հաշվետվությունները և ռազմավարական որոշումներ կայացնում՝ հիմնվելով գործառնական արդյունքների վրա: Արդյունքների գնահատման համար օգտագործվում է յուրաքանչյուր սեզմենտի գործառնական շահույթը, քանի որ ղեկավարությունը վստահ է, որ այդ տեղեկությունը ամենակարևորն է արդյունքների գնահատման գործընթացում:

Տեղեկատվություն՝ հաշվետու սեզոնների վերաբերյալ

2022

(հազար դրամ)

ՀԱՇՎԵՏՈՒ ՄԵՓՄԵՆՏՆԵՐ

	Գյուղմերթի արտադրություն, վաճառք/ արտահանում	Միջազգային բեռնափոխա դրամներ	Բեռնատարների սպասարկման կենտրոն	Կապույտ պանրի արտադրություն	Էլեկտրիկ կառուցում	Ընդամենը հաշվետու սեզոններ	Այլ սեզոններ	Ընդամենը
Արտաքին հասույթ	29,032,119	4,051,088	304,840	1,000,692	5,695,896	40,084,635	148,782	40,233,417
Միջնորդվող հասույթ	13,313,683	4,276,514	1,205,152	-	-	18,795,349	1,274,780	20,070,129
Սեզոնների հասույթ	42,345,802	8,327,602	1,509,992	1,000,692	5,695,896	58,879,984	1,423,562	60,303,546
Սեզոնների գործառնական շահույթ	(4,343,236)	(1,214,917)	270,459	(266,436)	2,763,810	(2,790,320)	(1,065,986)	(3,856,306)
Սեզոնների ակտիվներ	95,294,580	15,979,368	1,550,463	5,292,697	4,900,971	123,018,079	10,201,678	133,219,757
Սեզոնների պարտավորություններ	49,339,092	7,441,626	240,097	1,402,062	33,897,426	92,320,303	34,348,860	126,669,163

2021

(հազար դրամ)

ՀԱՇՎԵՏՈՒ ՄԵՓՄԵՆՏՆԵՐ

	Գյուղմերթի արտադրություն, վաճառք/ արտահանում	Միջազգային բեռնափոխա դրամներ	Բեռնատարների սպասարկման կենտրոն	Կապույտ պանրի արտադրություն	Ընդամենը հաշվետու սեզոններ	Այլ սեզոններ	Ընդամենը
Արտաքին հասույթ	32,098,967	3,800,586	134,568	611,578	36,645,699	313,860	36,959,559
Միջնորդվող հասույթ	860,746	4,313,020	872,128	-	6,045,894	494,659	6,540,553
Սեզոնների հասույթ	32,959,713	8,113,606	1,006,696	611,578	42,691,593	808,519	43,500,112
Սեզոնների գործառնական շահույթ	2,011,842	(860,649)	(179,092)	(491,308)	480,793	(207,072)	273,721
Սեզոնների ակտիվներ	99,753,578	26,062,287	1,313,444	4,402,414	131,531,723	1,191,375	132,723,098
Սեզոնների պարտավորություններ	58,692,926	36,064,268	9,756,483	1,712,209	106,225,886	13,456,193	119,682,079

Հաշվետու սեզմենտների վերաբերյալ տեղեկատվության համադրումը ՖՀՄՄ-ներին համապատասխան ներկայացված տվյալների հետ:

Հաշվետու սեզմենտների տեղեկատվությունը համադրվում է ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների հետ հետևյալ հիմունքով.

	2022թ.	2021թ.
Հասույթ		
Հաշվետու սեզմենտներ	58,879,984	42,691,593
Այլ սեզմենտներ	1,423,562	808,519
Միջսեզմենտային հասույթի փոխաբում	(20,070,129)	(6,540,553)
Համախմբված հասույթ	40,233,417	36,959,559
Գործառնական շահույթ		
Հաշվետու սեզմենտներ	(2,790,320)	480,793
Այլ սեզմենտներ	(1,065,986)	(207,072)
Զբաղիված գումարներ	(5,415,033)	428,273
Համախմբված գործառնական շահույթ	(9,271,339)	701,994
Ակտիվներ		
Հաշվետու սեզմենտներ	123,018,079	131,531,723
Այլ սեզմենտներ	10,201,678	1,191,375
Զբաղիված գումարներ	1,698,816	8,396,804
Համախմբված ընդամենը ակտիվներ	134,918,573	141,119,902
Պարտավորություններ		
Հաշվետու սեզմենտներ	92,320,303	106,225,886
Այլ սեզմենտներ	34,348,860	13,456,193
Զբաղիված գումարներ	3,640,223	5,649,833
Համախմբված ընդամենը պարտավորություններ	130,309,386	125,331,912

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Հող, շենքեր և շինություններ	Փոխանցող հարմարանքներ, մեքենաարքարավոր, տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք, շահագործման չհանձնված ՀՄ-եր, այլ	Բազմամյա տնկիներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>						
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	99,374,035	34,364,380	1,591,286	444,165	4,723,176	140,497,042
Ճշգրտում	-	-	-	-	-	-
Ներխմբային վերադասակարգում	748,027	54,065	(3,462)	3,477,760	(4,276,390)	-
Ավելացում	927,280	1,510,891	67,635	-	372,522	2,878,328
Օտարում և Նվազեցում	(169)	(101,606)	(14,159)	-	(1,679)	(117,613)
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,049,173	35,827,730	1,641,300	3,921,925	817,629	143,257,757
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>						
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,634,751	9,836,635	999,311	35,378	-	24,506,075
Ներխմբային վերադասակարգում	-	-	8	(8)	-	-
Տարվա ծախս	3,916,908	2,082,027	206,199	178,993	-	6,384,127
Նվազեցում	-	(14,814)	(1,062)	-	-	(15,876)
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,551,659	11,903,848	1,204,456	214,363	-	30,874,326
<i>Հաշվեկշիռային արժեք</i>						
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	85,739,284	24,527,745	591,975	408,787	4,723,176	115,990,967
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	83,497,514	23,923,882	436,844	3,707,562	817,629	112,383,431

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

(հազար դրամ)

	2022թ.	2021թ.
Վաճառքի ինքնարժեք	5,891,262	5,404,030
Իրացման և բաշխման ծախսեր	269,946	252,024
Վարչական ծախսեր	222,761	227,896
Այլ ծախսեր	156	2,206
	6,384,125	5,886,156

- ✓ Հիմնական միջոցներ դասում 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվում են 740,994 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնք ամբողջությամբ մաշված են:

5. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Համակարգչային ծրագիր	Ապրանքային նշաններ	Լիցենզիաներ	Այլ	Ընդամենը
<u>Սկզբնական արժեք</u>					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,152	1,988	27,500	29,497	127,137
Ավելացում	-	-	-	-	-
Նվազեցում	-	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	68,152	1,988	27,500	29,497	127,137
<u>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</u>					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	38,818	1,900	-	9,995	50,713
Տարվա ծախս Նվազեցում	6,708	13	-	5,529	12,250
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,526	1,913	-	15,524	62,963
<u>Հաշվեկշռային արժեք</u>					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,334	88	27,500	19,502	76,424
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,626	75	27,500	13,973	64,174

Ապրանքային նշանները ներառում են "Արարատ Ֆուդ", "Արարատ Ֆրուիթ" և "Սպայկա Պլաստիկ" ապրանքանիշերը:

6 Հարկային ակտիվներ (պարտավորություններ)

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվազագույն շահութահարկ	-	-
Հետաձգված շահութահարկ	(3,652,827)	(3,150,368)
Ընդամենը	(3,652,827)	(3,150,368)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

	2022թ. հունվարի 01-ի դրությամբ	ճանաչված սեփական կապիտալում	ճանաչված ֆինանսական արդյունք	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության կորուստից	31,244	-	272,549	303,793
Անհուսալի դեբիտորական պարտքերի պահուստից	8,110	-	(8,110)	-
Արձակուրդայինի պահուստից	104,500	-	29,522	134,022
Սպասվող պարտքային կորուստներ ավանդիների անհավաքագրելիությունի	561	-	-	561
Պաշարների արժեզրկումից	-	-	8,752	8,752
Կանխավճարների արժեզրկումից	-	-	58,126	58,126
Հարկային վնասից	499,782	-	(223,757)	276,025
	644,197	-	137,082	781,279
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Փոխառությունների գծով	-	-	-	-
Հիմնական միջոցների գծով	3,794,565	-	639,541	4,434,106
	3,794,565	-	639,541	4,434,106
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(3,150,368)	-	(502,459)	(3,652,827)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

	2021թ. հունվարի 01-ի դրությամբ	Ճանաչված սեփական կապիտալում	Ճանաչված ֆինանսական աղյուր	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Դերիտորական պարտքերի անհավաքագրելիության կորուստից	-	-	31,244	31,244
Անհուսալի դերիտորական պարտքերի պահուստից	-	-	8,110	8,110
Արձակուրային պահուստից	-	-	104,500	104,500
Սպասվող պարտքային կորուստներ ավանդիների անհավաքագրելիությունի	-	-	561	561
Հարկային վնասից	-	-	499,782	499,782
	-	-	644,197	644,197
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Փոխառությունների գծով Հիմնական միջոցների գծով	-	-	-	-
	-	-	3,794,565	3,794,565
	-	-	3,794,565	3,794,565
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	-	-	(3,150,368)	(3,150,368)

7 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ավանդ	4,362,693	4,616,193
Զվաստակած ֆինանսական եկամուտ	(1,762,693)	(2,016,193)
Ներդրված գումար	2,600,000	2,600,000
Սպասվող պարտքային կորուստներ	(3,120)	(3,120)
Զուտ գումար	2,596,880	2,596,880
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների համար	215,311	272,500
Ընդամենը	2,812,191	2,869,380

Բանկային ավանդ

Պայմանագրի տեսակը	Արժույթ	Տոկոսադրույք	Վերջնաժամկետ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ժամկետային	ՀՀ դրամ	9.75%	2029	2,600,000	2,600,000

8 Պաշարներ

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հումք և նյութեր	3,474,656	2,472,529
Նյութերի արժեքի նվազում	(48,622)	-
Անավարտ արտադրանք	-	-
Պատրաստի արտադրանք	579,364	644,877
Ապրանքներ	2,103,609	2,550,187
Ընդամենը	6,109,007	5,667,593

Գյուղատնտեսական ապրանքները հիմնականում ներառում են կաթնամթերքը, մրգեր ու բանջարեղեն: Պատրաստի արտադրանքը հիմնականում Ընկերության կողմից արտադրված Կապույտ պանիրն է և մրգային կոմպոտները:

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,070,199	9,074,937
Սպասվող պարտքային կորուստի մասով պահուստ	(1,687,745)	(173,576)
	6,382,454	8,901,361
Տրված կանխավճարներ	2,567,498	1,369,540
Արժեզրկման (անհավաք.) հայտ. ուն. գործառնական ակտ. հնար. կոր. ան. պահուստ	(322,924)	-
	8,627,028	10,270,901
Դեբիտորական պարտքեր աշխատակիցների գծով	353,741	236,767
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	5,551,660	3,851,964
Այլ	4,735,913	726,451
	19,268,342	15,086,083
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեի հանդեպ	345,990	1,381,207
Հետաձգված ԱԱՀ	69,671	8,642
Ընդամենը	19,684,003	16,475,932

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքերի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի գծով սպասվող պարտքային կորուստներիը գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված ընթացակարգը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար սպասվող պարտքային կորուստի գնահատում: 2022 դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարության գնահատմամբ ակնկալվող կորուստները կազմել են 1,687,745 հազար ՀՀ դրամ դեբիտորական պարտքերի գծով և 3,120 հազար ՀՀ դրամ ներդրված ավանդի գծով (Ծանոթագրություն 7):

Ընկերությունը ֆակտորինգի գծով բանկերին է փոխանցել առևտրային դեբիտորական պարտքեր՝ դրամական միջոցների դիմաց: Այդ դեբիտորական պարտքերը չեն ապահովվել Ընկերության համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որովհետև Ընկերությանն են վերապահվել տվյալ դեբիտորական պարտքերի գծով հիմնական ռիսկերն ու իրավունքները, նախ և առաջ, վարկային ռիսկը: Ֆակտորինգի գծով ստացված միջոցները հաշվառվել են որպես ապահովված բանկային վարկեր: Բյուջեի գծով դեբիտորական պարտքերը հիմնականում ներառում են ՊԵԿ-ի հարկերի միասնական հաշվին փոխանցված գումարները: Ղեկավարությունը կարծում է, որ պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքերն ամբողջությամբ վերականգնելի են:

2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 4,659,049 հազար դրամի (833,461,411.12 ռուբլի) դեբիտորական պարտք մեկ գործընկերոջ գծով, որը մինչ օրս ենթակա է վճարման՝ գործընկերոջ կողմից վճարումը կատարելու հետ կապված որոշ խնդիրների պատճառով: Ղեկավարությունը կարծում է, որ դեբիտորական պարտքերն ամբողջությամբ վերադարձվելի է և կմարվի մոտակա ապագայում:

10 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաշիվներ բանկում	734,112	13,342
Կանխիկ դրամ	40,302	26,264
Ընդամենը	774,414	39,606

11 Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,294,169	6,294,169
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված բաժնետիրական կապիտալ	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ կանոնադրական կապիտալի գումար	6,294,169	6,294,169
Մասնակից	Գումար	
Դավիթ Ղազարյան	6,294,169 հազար ՀՀ դրամ	

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 6,294,169 հազար ՀՀ դրամ (2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,294,169 հազար ՀՀ դրամ):

2022.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ մասնակիցն է Դավիթ Ղազարյանը (2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ մասնակիցն է Դավիթ Ղազարյանը):

Շահաբաժիններ

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի չափով:

2022թ.-ի և 2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում Խումբը շահաբաժիններ չի հայտարարել:

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ոչ ընթացիկ		
Վարկեր	69,728,127	83,760,948
Փոխառություն	-	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	980,279	459,978
	70,708,406	84,220,926
Ընթացիկ		
Վարկեր	9,692,960	11,621,171
Փոխառություն, այդ թվում*	726,931	1,134,473
Հիմնադրից	698,075	1,034,076
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	-	-
	10,419,891	12,755,644

*Ընկերությունը անտոկոս փոխառությունների տրամադրման և ստացման բազմաթիվ գործարքներ է կատարել ընկերության նկատմամբ վերահսկողություն ունեցող անձի, ինչպես նաև ընդհանուր վերահսկողության տակ գտնվող այլ կազմակերպությունների հետ: Գործարքների հիմնական նպատակը հիմնադրի կողմից վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններում դրամական միջոցների հոսքերի և մնացորդների օպտիմալ կառավարումն է: Շատ դեպքերում՝ ելնելով ընթացիկ իրավիճակի անհրաժեշտությունից, այս փոխառությունների տրամադրման/ստացման և մարման ժամկետներն ու գումարները էականորեն տարբերվում են պայմանագրերով սկզբնապես նախատեսված գումարներից և ժամկետներից:

Փաստացիորեն ընկերությունը չի վերահսկում փոխառությունների տրամադրման/ստացման, և մարման ժամկետներն ու գումարները, և հաշվետու ամսաթվին հաջորդող տասներկու ամիսների ընթացքում հնարավոր է կատարի փոխառությունների չալանավորված մարումներ՝ ելնելով խմբի գործառնական անհրաժեշտություններից:

Ուստի ներխմբային անտոկոս փոխառությունների գծով հնարավոր չէ կատարել սպասվող դրամական հոսքերի արժանահավատ կանխատեսում, որով նման փոխառությունները չեն գեղջվում:

Միջազգային բանկեր	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	2022	2021
Ապահովված բանկային վարկ	USD	2026	LIBOR+5%	16 106 514	18 264 966
Ապահովված բանկային վարկ	EUR	2024	EURIBOR+2.40%	3 419 615	4 307 842
Ապահովված բանկային վարկ	EUR	2024	EURIBOR+2.90%	2 670 644	3 335 424
Ապահովված բանկային վարկ	EUR	2024	2,20%	5 471 599	6 969 359
Ապահովված բանկային վարկ	USD	2026	LIBOR+5%	10 384 519	12 013 383
Ապահովված բանկային վարկ	* EUR	2023	EURIBOR+1.95	1 155 752	1 407 923
Ապահովված բանկային վարկ	USD	2027	2,00%	1 868 459	2 881 346
Ապահովված բանկային վարկ	EUR	2027	1,50%	5 181 018	6 694 318
	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	2022	2021
ՀՀ բանկ 1	AMD	2023	14.00%	351 208	-
Ապահովված բանկային վարկ	AMD	2029	13.15%*	1 980 000	1 980 000
Ապահովված բանկային վարկ	AMD	2022	13.15%*	-	20 833
Ապահովված բանկային վարկ	AMD	2022	12.00%	-	11 148
Ապահովված բանկային վարկ	AMD	2022	11.4%*	-	125 000
Ապահովված բանկային վարկ	AMD	2024	11.38%*	250 000	392 857
Ապահովված բանկային վարկ	AMD	2029	13.10%	7 454 200	7 502 356
Ֆինանսական վարձակալություն	USD	2027	8.5%*	99 789	-
Ֆինանսական վարձակալություն	USD	2027	8.5%*	40 751	-

	Ֆինանսական վարձակալություն	USD	2027	8.5%*	10 156	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	12.00%*	22 357	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2025	13.00%*	47 606	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	155 880	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	5 994	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	44 722	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	24 271	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	11 410	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	12 697	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2027	13.00%*	84 554	-
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2028	13.10%*	53 829	-
	Ֆինանսական վարձակալություն	USD	2024	9%*	20 494	45 288
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2025	13.2%*	7 564	9 455
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2028	13.2%*	5 551	6 560
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2025	13.2%*	147 545	172 136
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2025	13.2%*	179 508	212 145
	Ֆինանսական վարձակալություն	AMD	2022	2%	5 601	12 732
	Ապահովված-վարկային գիծ	USD	-	7,5%	4 176 718	4 980 735
	Ապահովված-վարկային գիծ	EUR	-	5,5%	1 252 923	1 990 717
	Ապահովված-վարկային գիծ	USD	-	7,5%	851 949	1 043 654
	Ապահովված-վարկային գիծ	EUR	-	5,5%	127 727	773 464
	Ապահովված-վարկային գիծ	AMD	2023	0%	224 811	-
	Ապահովված-վարկային գիծ	AMD	2023	0%	163 464	-
ՀՀ բանկ 2	Ապահովված բանկային վարկ	AMD	2023	13.10%*	575 000	2 300 000
	Ապահովված բանկային վարկ	AMD	2022	13.00%*	161 370	625 923
	Ապահովված-վարկային գիծ	AMD	-	9.00%	-	604 279
	Ապահովված-վարկային գիծ	AMD	2023	11.00%	607 187	-
	Ապահովված-վարկային գիծ	EUR	-	6.00%	-	1 248 828
	Ապահովված-վարկային գիծ	RUB	-	10.5%	-	979 494
	Ապահովված-վարկային գիծ	USD	2023	7.6%	1 798 414	-
	Ապահովված-վարկային գիծ	RUB	2023	11.65%	214 432	-
	Ապահովված-վարկային գիծ	RUB	2023	11.65%	265 379	-
	Ապահովված-վարկային գիծ	AMD	2023	-	9 956	-
	Ապահովված-վարկային գիծ	AMD	2024	14.00%	650 214	-
	Ապահովված-վարկային գիծ	AMD	2024	14.00%	1 176 192	-
	Ապահովված բանկային վարկ	USD	2022	7.5%	-	1 925 292
	Ապահովված բանկային վարկ	EUR	2023	7.25%	1 795 191	-
ՀՀ բանկ 3	Ապահովված բանկային վարկ	USD	2023	9.00%	47 789	365 986
	Ապահովված բանկային վարկ	USD	2023	6.5%	2 311 822	4 210 543
	Ապահովված բանկային վարկ	EUR	2023	6.0%	2 652 521	3 460 139
ՀՀ բանկ 4	Չափահովված բանկային վարկ	USD	2023	8.5%	101 696	-
ՀՀ բանկ 5	Չափահովված բանկային վարկ	AMD	2022	10%	-	65 134
	Չափահովված պարտատոմս	USD	2023	9%	2 090 801	2 550 696
	Չափահովված պարտատոմս	USD	2022	8,50%	-	480 140
	Չափահովված պարտատոմս	AMD	2023	12,5%	1 872 000	1 872 000
Փոխառություն	Չափահովված պարտատոմս	EUR	Ցայահանջ	Անտոկոս	29 404	100 383
	Չափահովված պարտատոմս	USD	Ցայահանջ	Անտոկոս	697,527	1 034 078
	Չափահովված պարտատոմս	AMD	2022	Անտոկոս	-	14
					81,128,297	96 976 570

* Տվյալ վարկերի տոկոսները ամբողջությամբ աուքսիդաիդրվում են պետության կողմից

****Պարտատոմսերի թողարկում**

2021թ-ի ապրիլի 8-ին Ընկերության միակ մասնակիցը ընդունել է որոշում՝ թողարկել ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով արտահայտված ոչ փոխարկելի, արժեկտրոնային, անվանական, ոչ փաստաթղթային պարտատոմսեր հետևյալ պայմաններով՝ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույն թողարկման ծավալը՝ 8,500,000 ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 1,000,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս քան թողարկված և շրջանառության մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ՀՀ դրամով արտահայտված 10%-ի չափով: Պարտատոմսերի տեղաբաշխումը կատարվել է 2021թ. ընթացքում, իսկ տեղաբաշխումից ստացված դրամական միջոցների ամբողջ ծավալը ուղղվել է 2019թ-ին թողարկված պարտատոմսերի մարմանը: Փինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ պարտատոմսերի մասով պարտավորությունները ամբողջությամբ մարվել են:

13 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հունվարի 1-ի դրությամբ	5,514,847	6,369,666
Շնորհի ամորտիզացիայից եկամուտ	(307,979)	(307,978)
Ճշտում նախորդ տարիներից	-	(546,841)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,206,868	5,514,847

Պետական Շնորհներ

2017թ-ի ընթացքում Խուլմբը պետական շնորհի միջոցով Երևանի քաղաքապետարանից ստացել է 6,369,666 հազար ՀՀ դրամ իրական արժեքով 76.4 հեկտար հողատարածք՝ պայմանով, որ մինչև 2020թ-ը այդտեղ կկառուցի պանրի գործարան և ջերմոցային տնտեսություն: 2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խուլմբն արդեն ավարտել է պանրի գործարանի և ջերմոցային տնտեսության շինարարությունը և նույն տարում հանձնել է դրանք շահագործման:

Ակտիվներին վերաբերող շնորհը ամորտիզացվում է համապատասխան ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ջերմոցային տնտեսության օգտակար ծառայության ժամկետը սահմանվել է 20 տարի, իսկ պանրի գործարանինը՝ 50 տարի:

14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,886,440	4,537,253
Հատուցումներ աշխատակիցներին	420,487	378,478
Վճարվելիք սոց. հատկացումներ	-	-
Կոսխավճարներ հաճախորդներից	30,794,238	13,576,016
Հարկերի գծով պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի	363,546	318,151
Արձակուրդայինի պահուստ	749,514	604,127
Այլ կրեդիտորական պարտքեր	203,063	276,102
Ընդամենը	38,417,288	19,690,127

15 Հասույթ

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գյուղմթերքի վաճառքից հասույթ	30,032,811	32,710,545
Միջազգային բեռնափոխադրման ծառայություններից	4,051,088	3,800,586
Ավտոտեխսպասարկման ծառայություններից	305,414	134,568
Այլ	5,844,104	313,860
Ընդամենը	40,233,417	36,959,559

16 Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գյուղմթերքի վաճառք	8,336,388	8,870,979
Միջազգային բեռնափոխադրման ծառայություններ	2,168,613	2,136,346
Տեխսպասարկման ծառայություններ	141,327	60,889
Այլ	3,041,422	226,278
Ընդամենը	13,687,750	11,294,492

17 Այլ եկամուտ

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	119,802	242,325
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ	172,787	41,680
Այլ	343,764	245,392
Ընդամենը	636,353	529,397

18 Իրացման ծախսեր

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տրանսպորտային ծախսեր	274,909	282,932
Հատուցումներ աշխատակիցներին	1,462,334	1,978,096
Հիմնական միջոցների մաշվածության, վերանորոգման ծախսեր	1,935,383	1,537,431
Այլ	10,663,089	6,028,287
Ընդամենը	14,335,715	9,826,746

19 Վարչական ծախսեր

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	501,443	538,144
Հիմնական միջոցների մաշվածության, վերան. ծախսեր	236,477	248,392
Գործողման և ներկայացուցչական ծախսեր	53,164	30,367
Գրասենյակային և հեռահաղորդակցության ծախսեր	126,072	94,760
Առողիտորական և խոյրիդատվական ծախսեր	5,988	98,187
Բանկային, ապահովագրության ծախսեր	56,231	40,764
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	796,859	79,905
Այլ	1,852,055	108,378
Ընդամենը	3,628,289	1,238,897

20.1 Գյուղատնտեսական գործ. ժամանակ. ծախսեր
հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ջերմոցների ծախսումներ	15,694,171	13,318,146
Այգիների ծախսումներ	1,238,492	376,668
Բաց գրունտի ծախսումներ	-	10,095
Ընդամենը	16,932,663	13,704,909

20.2 Այլ ծախսեր
հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Երաշխիքային սպասարկման գծով ծախսեր	3,841	6,157
Դեր. պարտքերի կորուստների գծով ծախսեր	1,983,364	45,057
Տույժեր, տուգանքներ	120,242	64,414
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր	555,866	232,145
Այլ	821,416	374,145
Ընդամենը	3,484,729	721,918

21 Ֆինանսական հոդվածներ
հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական եկամուտներ	255,066	12,186
Ֆինանսական ծախսեր	(5,051,856)	(6,551,562)
	(4,796,790)	(6,539,376)

22 Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս
հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցի վաճառքից եկամուտ	89,100	1,638
Հիմնական միջոցի վաճառքից ծախս	(99,789)	(1,287)
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	307,978	316,054
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	-	(2,746)
Արտասովոր եկամուտներ	-	6,042
Արտասովոր ծախսեր	-	-
Արտարժույթի վերագնահատումից եկամուտներ	28,427,006	17,978,043
Արտարժույթի վերագնահատումից ծախսեր	(13,873,380)	(8,238,542)
Պարտավորությունների ներումից եկամուտներ	189,638	134,963
Պարտավորությունների ներումից ծախսեր	(100,389)	(4,529)
	14,940,164	10,189,636

23 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)
հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,368,928	-
Հետաձգված հարկ	502,459	3,150,416
Ընդամենը	2,871,387	3,150,416

2022թ. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18 տոկոս է (2021թ.՝ 18%):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	(1,056,002)		4,352,254	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	(190,080)	(18.00)	783,406	18.00
Չնվազեցվող / չհարկվող հոլվածներ	3,061,467	289.91	2,367,010	54.38
Հարկային վնասի սպաճանաչում	-	-	-	-
Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում)	2,871,387	271.91	3,150,416	72.38

24 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ընկերությունը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Հաշվապահական գնահատումները, սակայն, երբեմն չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

**Դեբիտորական պարտքերի և
կանխավճարների վերականգնում**

Դեբիտորական պարտքերի մնացորդը ներառում է նաև պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերը: Ղեկավարության համոզմամբ պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերն ամբողջովին փոխհատուցվող են:

25 Պայմանական պարտավորություններ

25.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Ընկերությունը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Ընկերության վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել անվճարումակությունը, թուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, դեկլարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

25.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

25.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

25.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերության բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

25.5 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Խմբի կապակցված կողմերում ներառվում են նրա բաժնետերերը, վերջիններիս և հիմնական ղեկավար անձնակազմին վերաբերող այլ կազմակերպություններն ու անհատները:

Խմբի վերջնական վերահսկող կողմը Դավիթ Ղազարյանն է, ում պատկանում է Ընկերության 100% բաժնեմասը:

Փոխկապակցված ֆիզիկական անձ՝ Դավիթ Ղազարյան /մասնակից/

- Տրված փոխառություն (անվանական արժեքով)

Մնացորդ՝ 01.01.2022	Ավելացում	Մարում	Մնացորդ՝ 01.01.2023
100,000	-	-	100,000

- Ներգրավված փոխառություն (անվանական արժեքով)

Մնացորդ՝ 01.01.2022	Մուտք	Ելք (մալում)	Մնացորդ՝ 01.01.2023
1,034,077	-	(336,002)	698,075

• Գործառնական գործունեություն

Ձեռքբերում	Վաճառք	Դեբիտորական պարտքեր առ 01.01.2023	Կրեդիտորական պարտքեր առ 01.01.2023
-	231	10	-

25.6 Գործարքներ անձնակազմի հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ՝	79,397	77,443

Հիմնական անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	4,242,134	3,931,208
Արձակուրդային	310,600	294,308
Պարգևատրումներ	1,175,822	783,025
Այլ	46,062	67,522

26. Իրավական հարցեր

- a) 2019 թվականի ապրիլի 4-ին Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) քննչական վարչությունում, «Գրինպրոդուկտ» ՍՊԸ ռեզիդենտ իրավաբանական անձի առևտրային գործունեության առնչությամբ, մեղադրանք է առաջադրվել «Սպայկա» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի ենթադրյալ առկայությամբ, որը սահմանում է պատիժ՝ հարկերից, տուրքերից կամ պարտադիր այլ վճարներից խուսափելու համար:

ՊԵԿ քննչական վարչությունը մեղադրում է, որ հարկերից խուսափելու մտադրությամբ, 2015 թ-ի հունվարի 1-ից մինչև 2016 թ-ի հունվարի 11-ը ընկած ժամանակահատվածում «Սպայկա» ՍՊԸ-ի ղեկավարությունը փաստացիորեն վերահսկել է «Գրինպրոդուկտ» ՍՊԸ-ին, որն օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պատշաճ կերպով չի հայտարարագրել և չի ներկայացրել մաքսային մարմիններին իր կողմից ներմուծվող ապրանքի փաստացի տվյալները: Մասնավորապես, ըստ ՊԵԿ քննչական վարչության, մաքսագերման, ԱԱՀ-ի և այլ հարկային վճարումների նպատակով մաքսային մարմիններին ներկայացվել են կեղծ տվյալներ, որոնց համաձայն ներմուծված ապրանքները ազատված են մաքսատուրքից և ԱԱՀ-ից: Ըստ քրեական վարույթի իրականացնող մարմնի, դա թույլ է տվել խուսափել 7,036,666 հազար ՀՀ դրամ փաստացի հարկային պարտավորությունների վճարումից:

Միաժամանակ, Հայաստանի խոշորագույն արտահանող ագրոհոլդինգ «Սպայկա» ընկերության գործունեության շարունակությունը չվտանգելու համար, 2019 թվականի մայիսին 1,000,000 հազար ՀՀ դրամ է փոխանցվել ՀՀ պետական գանձապետարան՝ որպես դեպոզիտային վճար:

Քրեական վարույթի ընթացքում ձեռքբերված ելակետային տվյալների հիման վրա ընկերությունում 2022թ.-ի նոյեմբերի 25-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ստուգումների հիման վրա գրացուցիչ հարկային պարտավորությունները հաշվարկելու և առաջադրելու համար իրականացվել են համալիր հարկային ստուգումներ, որոնց ընթացքում ընկերության

կողմից ներկայացվել են 2018 թվականի և 2019 թվականի գծով հարկային ճշգրտված հաշվարկներ, որոնց արդյունքում Ընկերության համար ձևավորվել են նոր հարկային պարտավորություններ՝ 3,539,870 հազար ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը դիմել և ստացել է պետական եկամուտների կոմիտեի փաստացի համաձայնությունը ճշգրտված հաշվարկների արդյունքում ձևավորված նոր հարկային պարտավորությունները մարման ժամանակացույցի համապատասխան մինչև 31.08.2023 թվականը կատարելու մասին:

Նախկինում որպես դեպոզիտ վճարված 1,000,000 հազար դրամն ուղվելու է ճշգրտված հարկային պարտավորությունների մարմանը, և ներկայումս Ընկերությունը համաձայնեցված ժամանակացույցի համաձայն իրականացնում է ճշգրտման արդյունքով ձևավորված հարկային պարտավորությունների մարումը, ինչը բերելու է «հարկային գործի» վերջնական ավարտին:

Խմբի կողմից 2022թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ֆինանսական հաշվետվություններում գործի առնչությամբ պահուստ չի ճանաչվել, քանի որ Խմբի ղեկավարությունը վստահ է, որ գործի պարտադիր կատարման կամ կարգավորման հետևանքով առաջացած ցանկացած պարտավորություն (որն էլ որ կլինի արդյունքում) չի ունենա որևէ իրավական առնչություն Խմբի հետ և չի կարող նրան վերագրվել:

- b) Ֆինանսական հաշվետվության ներկայացման ամսաթվի դրությամբ «Սպայկա» ՍՊԸ-ի հանդեպ ներկայացրած է երկու հայցադիմում, որը գումարային արտահայտությամբ համարվում է էական:
- a. Հայցապահանջը կազմում է 113,282 Եվրո և այն ներկայացրել է Բելգիական «Բելէքսպորտ» ՍՊ Ընկերությունը: Դատական գործի համարն է ԵԴ/16815/02/21: Դատական գործընթացը գտնվում է ընթացքի մեջ:
 - b. Հայցապահանջը կազմում է 303,066 ԱՄՆ դոլար և այն ներկայացրել է Վարդուհի Մանուկյանը: Դատական գործի համարն է ԵԴ/5870/02/22: Դատական գործընթացը գտնվում է ընթացքի մեջ:

27 Ֆինանսական գործիքներ

27.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթներ.

Ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և բաժնային գործիքների յուրաքանչյուր դասի համար կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ընդունված մեթոդների մանրամասները և եկամուտների ու ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաներ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ակտիվների և պարտավորությունների մնացորդները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

Ֆինանսական ակտիվներ

(հազ.դրամ)

	2022թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2021թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված փոխառություններ	4,678,791	2,788,848
Առևտրային դեբիտորական պարտքեր	6,059,530	9,074,937
Բանկային ավանդներ	2,611,112	2,611,807
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բացառությամբ՝ դրամարկղի մնացորդի	734,112	13,342
Ընդհանուր ֆինանսական ակտիվներ	14,083,545	14,488,934

Ֆինանսական պարտավորություններ

(հազ.դրամ)

	2022թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2021թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Ստացված փոխառություններ	726,931	1,134,473
Բանկային վարկեր	79,421,087	95,382,118
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	980,279	459,978
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,306,928	4,964,841
Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ	87,435,225	101,941,410

28. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական ռիսկը, վարկային (պարտքային) ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ընկերությունը ֆինանսական ակտիվների ակտիվ առևտուր չի իրականացնում սպեկուլյատիվ նպատակներով և չի գրում օպցիոններ:

Ամենաեական ֆինանսական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման արդյունքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արժույթային ռիսկի, որը բխում է ինչպես իր գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթ կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմիզացնելով հատույցը: Ընկերությունը իր շուկայական ռիսկերը չի հեջավորում:

Արժույթային ռիսկ

Ընկերությունը ենթարկված է արտարժույթային ռիսկին արտարժույթային փոխառությունների, վարկերի, դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտավորությունների, արտարժույթային դրամական մնացորդների գծով:

Արտարժույթային ռիսկին ենթարկվածությունը

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությունը ենթարկում է արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև, արտահայտված հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Ֆինանսական ակտիվներ

(հազ.դրամ)

	31.12.2022թ	31.12.2021թ
Տրված փոխառություններ	1,708,753	1,971,333
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,726,921	8,772,032
Բանկային ավանդներ	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բացառությամբ՝ դրամարկղի մնացորդի	721,028	5,863
	<u>8,156,702</u>	<u>10,749,228</u>

Ֆինանսական պարտավորություններ

(հազ.դրամ)

	31.12.2022թ.	31.12.2021թ
Ստացված փոխառություններ	727,479	1,134,460
Բանկային վարկեր	63,945,484	80,162,587
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	171,190	46,950
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,098,035	2,547,835
Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ	<u>66,942,188</u>	<u>83,891,832</u>
Զուտ արդյունք	<u>(58,785,486)</u>	<u>(73,142,604)</u>

Տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքներ:

Դրամով	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	2022	2021	31.12.2022թ	31.12.2021թ
	12 ամիս ամիս	12		
1 Դոլար	435.87	503.83	393.57	480.14

բ) Վարկային (պարտքային) ռիսկ

Վարկային ռիսկը հաճախորդի կամ այլ գործընկերոջ կողմից իր պարտավորությունները չկատարելու հետևանքով Ընկերության կողմից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկն է: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, փոխառությունները և այլն: Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքներով:

(հազ.դրամ)

	2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.
<i>Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ</i>		
Դեբիտորական պարտքեր	6,059,530	9,074,937
Տրամադրված փոխառություններ	4,678,791	2,788,848
Բանկային ավանդներ	2,611,112	2,611,807
Բանկային հաշիվների մնացորդներ	734,112	13,342
	<u>14,083,545</u>	<u>14,488,934</u>

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը իրենից ներկայացնում է այն ռիսկը, երբ ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:

Ընկերության քաղաքականությունը ներառում է իրացվելիության կառավարման զգուշավոր քաղաքականություն, որը նախատեսում է դրամական միջոցների եւ բանկային հաշիվների մնացորդների, ինչպես նաեւ բարձր իրացվելի ակտիվների բավարար քանակ՝ ժամանակին պարտավորությունների համար բոլոր վճարումները ապահովելու համար:

Իրացվելիության ռիսկը գնահատելիս և կառավարելիս Ընկերությունը հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից դրամական միջոցների հոսքերը, մասնավորապես, դրամական միջոցներից և դեբիտորական պարտքերից: Ընկերության դրամական և առևտրային դեբիտորական պարտքերը զգալիորեն գերազանցում են պահանջվող ընթացիկ դրամական միջոցների արտահոսքի պահանջները: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից պայմանագրային դրամական հոսքերը մարվում են 30 օրվա ընթացքում:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ տեսանելի ապագայում կարողանա շարունակել իր գործունեությունը, միաժամանակ փորձելով առավելագույնի հասցնել շահույթը բաժնետիրոջ համար: Ընկերության կապիտալը բաղկացած է սեփական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը:

Ընկերության ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները՝ ապահովելու ֆինանսավորման կառուցվածքի ընդհանուր արդյունավետությունը և խուսափելու չափից ավելի վարկավորումից (լեվերինգից): Սա հաշվի է առնում Ընկերության ստորադաս պարտքի տարբեր դասեր: Ընկերությունը կարգավորում է կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ ելնելով տնտեսական միջավայրի փոփոխություններից և ակտիվների հետ կապված ռիսկերից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ կատարելագործելու համար Ընկերությունը հնարավորություն ունի փոխել բաժնետիրոջը վճարված շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետիրոջը, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվներ՝ պարտքը նվազեցնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության կապիտալի ճշգրտումներ կատարող գումարները հետևյալն են.

<i>(հազ.դրամ)</i>	2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր փոխառություններ, վարկեր և ֆին.վարձակալություն	81,128,297	96,976,569
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(774,414)	(39,606)
Զուտ փոխառություններ, վարկեր և ֆին.վարձակալություն	80,353,883	96,936,963
Ընդհանուր սեփական կապիտալ	11,860,602	15,787,990
Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն	6.77	6.14